

# ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈՒԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ՝ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

09.05.2023



## Միրելի՛ պուճեցիներ

### Մեր կողքին ապրող՝ Հայրենական մեծ պատերազմի սակավաթիվ վետերաններ Արցախյան բոլոր պատերազմների սիրելի՛ վետերաններ

Ինչպիսի տրամադրությամբ ու մտքերով էլ դիմավորենք Մայիսի 9-ը, այն մեզ համար խորհրդանշում է ՀԱՂԹԱՆԱԿ՝ մեր պապերի 1945-ի հաղթանակը, մեր հայրերի ու եղբայրների 1992-ի հաղթանակը՝ Շուշիի ազատագրումը: Ուստի, անկախ առկա հանգամանքներից, հե՛նց այս օրը պետք է շնորհավորենք միմյանց հայ ժողովրդի ազատասեր ու չընկճվող ոգու, քաջ արարումների ու հերոսությունների, հայրենիքի հանդեպ անսպառ սիրո ու նվիրումի համար, որոնք իր մեջ ամբողջացնում է Հաղթանակի ու խաղաղության տոնը, նաև՝ շնորհակալություն հայտնենք մեր հաղթանակները կերտողներին:

Օրը նաև հիշեցնող ու սթափեցնող է՝ հաղթանակ ենք պարտք ինքներս մեզ ու գալիք սերունդներին, իսկ հաղթանակ ասելով՝ չպետք է հասկանալ այն միայն ռազմի դաշտում. միասնական ջանքերի ու նվիրումի շնորհիվ հաղթանակներն ու զարգացումը տարբեր ոլորտներում կարող են մեզ համար ամուր հիմք լինել այլ ասպարեզներում ևս...

1992-ի մայիսը Հայաստանի նորագույն պատմության պանծալի շրջափուլն է, որով քաջալերվել ու սեփական ուժերի հանդեպ ազգային հավատը պահպանել է պետք: Քաջության օրինակներ նաև բազում պուճեցիներ են եղել թե՛ Մեծ հայրենականում, թե՛ առաջին Արցախյան պատերազմում, թե՛ մեր օրերում, ցավոք, նաև՝ արյան գնով: Իմ խոնարհումը՝ բոլոր հերոսների հիշատակին, որոնց անունն անմահացել է հայրենիքի պատմության էջերին: Իմ շնորհակալությունը՝ մեր երկրի սահմաններին կանգնած հայորդիներին, նրանք այսօր էլ շարունակում են սխրանքներ գործել:

Շնորհավորում եմ բոլորիս այս կարևոր ու նվիրական տոնի կապակցությամբ, շնորհավորում եմ նաև նախօրեին՝ մայիսի 8-ին, նշվող Երկրապահի օրվա առիթով:

Խաղաղություն ու հաղթանակներ՝ մեր հայրենիքին ու բարեկեցություն՝ բոլորիդ ընտանիքներին: